

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՆԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՆԱՐԿՈՒՄԻՅ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 հունիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի նոյեմբերի 10-ին Բուդապեշտում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ Նունգարիայի Նանրապետության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 08.06.2010թ. ՏՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՏՏ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Խնդրո առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. նոյեմբերի 10-ին՝ Բուդապեշտում: Նամաձայնագրի նպատակը Պայմանավորվող պետությունների միջև եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է: Այն բաղկացած է 29 հոդվածից եւ համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Արձանագրությունից:

2. Նամաձայնագրով նախատեսված է, որ այն կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ՝ կապված Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի եւ գույքի նկատմամբ սահմանվող հարկերի հետ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

Նամաձայնագրով սահմանվում են Նայասրանի Նանրապետությունում եւ Նունգարիայի Նանրապետությունում գանձվող հարկերի տեսակները, կանոնակարգվում են եկամուտների սրացման՝ երկրում հիմնական եկամտատեսակների՝ շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման պայմանները եւ, հարկապես, դրույքաչափերը:

Նամաձայնագրով սահմանված են հարկման հետևյալ օբյեկտները .

- անշարժ գույքից սրացված եկամուտը,
- ձեռնարկատիրական գործունեությունից սրացվող շահույթը,
- միջազգային փոխադրումներից՝ նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից սրացված շահույթը,
- շահաբաժինները, տոկոսները, ռոյալթին,
- գույքի արժեքի հավելվածը,
- արտիստների եւ մարզիկների գործունեությունից սրացված եկամուտը,

- կենսաթոշակները, պեդական ծառայության դիմաց վճարված աշխատավարձը,

- ուսանողին, դասախոսին, ուսուցչին տրված վճարումները, այլ եկամուտներ:

Ըստ համաձայնագրի՝ այն կիրառվում է նաև դրանում նախատեսված ցանկացած նույնարիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են համաձայնագիրն ստորագրելուց հետո՝ գործող հարկերի կամ դրանց փոխարեն:

**3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն սրանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում.**

- իր իրավասու մարմինների միջոցով Հունգարիայի Հանրապետությանը ծանուցել իր հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին,

- ապահովել Հայաստանում կրկնակի հարկման բացառումը,

- Հունգարիայի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի խիստ որել է հարկման կամ դրա հետ կապված որել է պարտավորության կատարման, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, քան այն հարկումը ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումն է, որոնց, միևնույն հանգամանքների դեպքում, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

- ապահովել, որպեսզի Հունգարիայի Հանրապետության ձեռնարկության փորձեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հարկումը Հայաստանի Հանրապետությունում չլինի նվազ բարենպաստ, քան Հայաստանի Հանրապետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը,

- Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է Հունգարիայի Հանրապետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է Հունգարիայի մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որել է հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան Հայաստանի Հանրապետության այլ նման ձեռնարկությունները:

**4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Հունգարիայի Հանրապետության ռեզիդենտ-**

ների կողմից Նայասպանի Նանրապետությունում ստացված որոշ տեսակի եկամուտները չհարկել կամ հարկել նվազեցված դրույթաչափերով:

Նամաձայնագրով սահմանափակվում է նաև Նունգարիայի Նանրապետության ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող փոկոսները և ռոյալթիները հարկելու՝ Նայասպանի Նանրապետության իրավունքը: Սակայն, եթե փոկոսների և ռոյալթիների փաստացի սեփականատերը Նունգարիայի Նանրապետության ռեզիդենտ է, ապա Նայասպանում գանձվող հարկը չպետք է գերազանցի փոկոսների համախառն գումարի 10 փոկոսը և ռոյալթիների համախառն գումարի 5 փոկոսը:

**5.** Նամաձայնագիրն ամրագրում է նաև հարկումից խուսափելը կանխելու կառուցակարգ, ինչպես նաև երաշխավորում է Պայմանավորվող պետությունների ազգային անձանց նկատմամբ հարկային խտրականության բացառումը:

Արդի միջազգային իրավունքին ներդաշնակ համաձայնագրի գործողությունը չի փարսվում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների նկատմամբ:

Նամաձայնագրի եզրափակիչ դրույթները նվիրված են վերջինիս մեկնաբանման կամ կիրառման հետ կապված հնարավոր վեճերի լուծման, տեղեկությունների փոխանակման, ուժի մեջ մտնելու և դրա գործողության դադարեցման կարգին ու պայմաններին, ժամկետներին:

**6.** Նունգարիայի Նանրապետության հետ կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա զարգացնելու երկու պետությունների միջև ապրանքների և ծառայությունների շրջանառությունը, կապիտալի, տեխնոլոգիաների, մարդկանց շարժը, կնպաստի տնտեսական կապերի զարգացմանը:

Նամաձայնագրով Նայասպանի Նանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՆՏ Սահմանադրության 8 և 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջև բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները, նաև ստեղծելու իրավական բարենպաստ պայմաններ կողմերի համապատասխան սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2009 թվականի նոյեմբերի 10-ին Բուդապեշտում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության և Նունգարիայի Նանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 հունիսի 2010 թվականի  
ՍԴՈ-900